ՎԱՐԴԱՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի
«Ազգային անվտանգության հետազոտություններ» ծրագրի տնօրեն,
տնտեսագիտության թեկնածու

ՇՈՒՇԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի
«Ազգային անվտանգության հետազոտություններ»
ծրագրի կրտսեր փորձագետ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՔՆԱԾ ՀՍԿԱՅԻ ՁԱՐԹՈՆՔԸ

21-րդ դարում Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը դարձել է աշխարհաքաղաքական առանցքային դերակատարներից մեկը, որի ազդեցությունը վաղուց դուրս է եկել ազգային սահմաններից: Հաշվի առնելով արագ փոփոխվող աշխարհաքաղաքական իրականությունը՝ Հարավային Կովկասի երկրները ևս փորձում են ակտիվացնել իրենց արտաքին քաղաքականության արևելյան վեկտորը:

Հոդվածում ներկայացվում է Հարավային Կովկասի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության նկատմամբ Չինաստանի վարած քաղաքականության ուրվագծերը: Քննարկվում են Չինաստանի՝ որպես նոր համաշխարհային ուժային կենտրոնի տնտեսական, քաղաքական և քաղաքակրթական ազդեցության տարածման միջոցները: Միաժամանակ դիտարկվում են Հարավային Կովկասում Չինաստանի հետաքրքրությունները, ինչպես նաև տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում հայ-չինական տնտեսական, քաղաքական հարաբերությունների զարգացման հեռանկարներն ու հնարավորությունները:

Հիմնաբառեր. *Չինաստան, Հարավային Կովկաս, հայ-չինական հարաբերություններ, «փափուկ ուժ», աշխարհաքաղաքականություն, Լեռնային Ղարաբաղ*

Այստեղ պառկած է քնած հսկան: Թող նա քնի:
Եթե նա արթնանա, կցնցի աշխարհը…
Նապոլեոն Բոնապարտ (1803)

Վերջին տասնամյակներում համաշխարհային տնտեսության կարևորագույն միտումներից մեկը Չինաստանի տնտեսության զարգացման աննախադեպ բարձր տեմպերն են: Գաղտնիք չէ, որ ներկայում Չինաստանը աշխարհի ամենաարագ զարգացող տնտեսությամբ երկրներից է: Տնտեսական աճի բարձր տեմպերը հիմք ընդունելով՝ ենթադրվում է, որ առաջիկա 10 տարիների ընթացքում Չինաստանը ՀՆԱ ծավալով կգերազանցի ԱՄՆ-ին՝ դառնալով աշխարհի խոշորագույն տնտեսական տերությունը: Փաստ է նաև, որ Չինաստանն այսօր աշխարհաքաղաքական առանցքային դերակատարներից մեկն է, որի հետաքրքրությունները վաղուց դուրս են եկել ազգային սահմաններից:

Հարկ է նշել, որ Չինաստանն իր արտաքին քաղաքականությունն իրականացնելիս վերջին տարիներին հաջողությամբ կիրառում է նաև, այսպես կոչված, «փափուկ ուժի» (soft power) հայեցակարգը՝ լայնորեն կիրառելով մշակութային, լեզվական և աշխարհայացքային ազդեցության գործիքները:

Այսպես՝ Չինաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի 16-րդ գումարման 4-րդ պլենումում, որ տեղի է ունեցել 2004 թ. սեպտեմբերին, խնդիր էր դրվել տարածել և ճանաչելի դարձնել չինական մշակույթն ամբողջ աշխարհում: Դրա նպատակը Չինաստանի համալիր ուժի ամրապնդումը, մշակույթի առաջմղումը և միջազգային ազդեցության ընդլայնումն է: Այդ ծրագրի իրականացման գործնական քայլերից էր 2008 թ. Պեկինում անցկացված օլիմպիադան և ամբողջ աշխարհի տարբեր վայրերում չինական մշակույթի, չինարենի ուսուցման կենտրոնների բացումը, որոնք ստացան *Կոնֆուցիոսի ինստիտուտներ* անվանումը[1]:

Հատկանշական է, որ Հայաստանում ևս գործում է Կոնֆուցիոսի ինստիտուտ, որը բացվել է 2009 թ. ՀՀ և ՉԺՀ Կառավարությունների միջև ստորագրված համաձայնագրի շրջանակներում և գործում է Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարանի կազմում: Ինստիտուտը կոչված է մեծացնելու չինարենի և մշակույթի վերաբերյալ իրազեկությունը, ամրապնդելու համագործակցությունը Չինաստանի և Հայաստանի միջև[2]:

Մյուս կողմից՝ տարբեր տարածաշրջաններ ներթափանցելու համար Չինաստանը լայնորեն օգտագործում է նաև տնտեսական լծակներ: Չինաստանի տնտեսական էքսպանսիան այսօր զգացվում է աշխարհի ցանկացած անկյունում՝ Աֆրիկա, Լատինական Ամերիկա, Մերձավոր Արևելք և այլն: Դժվար թե գտնվի մի երկիր, որն առևտրային կապեր չունենա Չինաստանի հետ: Հարավային Կովկասը և, մասնավորապես՝ Հայաստանը ևս բացառություն չեն: Հաշվի առնելով տեղի ունեցող աշխարհաքաղաքական փոփոխությունները և ուժային նոր համաշխարհային կենտրոնի ձևավորումը Արևելքում՝ Հարավային Կովկասի երկրները նույնպես, իրենց հերթին, փորձում են ակտիվացնել իրենց արտաքին քաղաքականության արևելյան վեկտորը:

---

[1] Տե՛ս **Погорелов Р.,** «Мягкая» сила КНР и что Пекин может предложить миру, (10/04/2014), http://ru.journal-neo.org/2014/04/10/rus-myagkaya-sila-knr-i-chto-pekin-mozhet-predlozhit-miru/

[2] Առավել մանրամասն տե՛ս ԵՊԼՀ Կոնֆուցիոսի ինստիտուտի պաշտոնական կայքը՝ http://confucius.brusov.am/about.php

Կովկասը նախկինում երբեք չի ընդգրկվել Չինաստանի աշխարհաքաղաքական հետաքրքրությունների առաջնահերթություններում: Այլ գերտերությունների համեմատությամբ, Չինաստանն այստեղ ունի նվազագույն աշխարհաքաղաքական ներկայություն: Ասել, թե ներկա փուլում Կովկասը չինական աշխարհաքաղաքականության առաջնային ուղղություններից է, այնքան էլ ճիշտ չի լինի, սակայն ինչպես աշխարհի ցանկացած անկյունում, այնպես էլ Հարավային Կովկասում վերջինիս դերը աստիճանաբար մեծանում է: Բնականաբար, ակադեմիական և փորձագիտական շրջանակներում մեծանում է նաև այդ գործընթացների ուսումնասիրության, առկա և կանխատեսվող միտումների վերաբերյալ համապատասխան աշխատանքների նկատմամբ հետաքրքրությունը:

Հարավային Կովկասը աշխարհի ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող տարածաշրջաններից է, որտեղ բախվում են տարբեր գերտերությունների շահերը: ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Եվրոմիությունը, ինչպես նաև տարածաշրջանային տերությունները՝ ի դեմս Իրանի ու Թուրքիայի, ձգտում են Հարավային Կովկասում գերիշխող ազդեցություն ունենալ, և նրանց հավակնությունները միանգամայն բացատրելի են: Պետք է նշել, որ վերոնշյալներից Ռուսաստանն ու Իրանը, նաև Չինաստանը բացարձակապես շահագրգռված չեն այս տարածաշրջանում ԱՄՆ-ի և Եվրոմիության դիրքերի ամրապնդմամբ: Այս համատեքստում երեք երկրների մոտեցումները համընկնում են: Ինչպես իրավացիորեն նշում է քաղաքագետ Ս. Շաքարյանցը՝ «Չինաստանը Ռուսաստանի և Իրանի ոչ բացահայտ համախոհն է»[3]:

Հարավային Կովկասում Չինաստանն իրականացնում է իրեն բնորոշ աստիճանական տնտեսական էքսպանսիայի քաղաքականություն՝ առանց վնասելու տվյալ տարածաշրջանում ավանդաբար ներգրավված գերտերությունների շահերը[4]: Տարեցտարի ընդլայնվում են այս երկրի առևտրատնտեսական հարաբերությունները տարածաշրջանի երկրների հետ: Պեկինը կասպյան տարածաշրջանը դիտարկում է ոչ միայն էներգետիկ անվտանգության ապահովման համատեքստում, այլ նաև որպես հումքային տարբեր ռեսուրսների աղբյուր: Չինաստանի համար, սակայն, Հարավային Կովկասն, առաջին հերթին, կարևորվում է որպես տրանսպորտային միջանցք՝ դեպի արևմտյան տարողունակ շուկաներ չինական ապրանքների փոխադրման և իրացման համար:

Ակնհայտ է, որ Չինաստանի համար Կովկասը ռազմավարական կարևոր տարածաշրջան է նաև մի շարք սպառնալիքների՝ իսլամական ֆունդամենտալիզմի և պանթյուրքիզմի գաղափարախոսություններին հակազդելու տեսանկյունից[5]: Չինաստանը, ինչպես հայտնի է, բազմազգ պետություն է, որտեղ ապրում են տասնյակ միլիոնավոր մահմեդականներ: Առավել խնդրահարույց է Սինցզյան-Ույղուրական ինքնավար շրջանը, որտեղ Չինաստանը որոշակի մտավախություններ ունի թե՛ պանթյուրքիզմի, թե՛ իսլամական արմատականության տեսանկյունից: Չինաստանը մտավախություն ունի, որ ներքին հիմնախնդիրները, որպես ճնշման լծակ, Արևմուտքի կողմից կօգտա-

---

[3] Տե՛ս **Шакарянц С.,** Напряжённая ситуация вокруг Армении и Арцаха – часть планов США, (10/08/2014), http://geoclub.info/?p=1502

[4] Տե՛ս **Агаджанян М.,** Китайский интерес к Южному Кавказу, № 18 (201), октябрь (1–15), 2012, http://noev-kovcheg.ru/mag/2012-18/3479.html

[5] Տե՛ս **Бабаян Д.,** Роль и место Южного Кавказа в геополитической повестке Китайской Народной Республики, ,,21-й век", № 2 (18), 2011, էջ 67:

գործվեն աշխարհաքաղաքական նպատակներով: Կարծում ենք՝ այս համատեքստում Հայաստանը, որպես պատնեշ պանթյուրքիզմի ճանապարհին, նույնպես աշխարհաքաղաքական որոշակի նշանակություն ունի Չինաստանի համար:

Հարկ է նշել, որ հարավկովկասյան երկրների հետ Չինաստանի հարաբերությունները հիմնականում տնտեսական բնույթ ունեն: Երկիրը գրեթե ներգրավված չէ հարավկովկասյան հակամարտությունների կարգավորման որևէ գործընթացում և տարածաշրջանի որևէ երկրի հետ ռազմավարական գործընկերության հարաբերությունների մեջ չի գտնվում: Չինաստանը ո՛չ ՆԱՏՕ-ի անդամ է, ո՛չ էլ ՀԱՊԿ-ի: Չինաստանի առաջնորդներն իրենց ելույթներում բազմիցս հասկացրել են, որ ո՛չ Հյուսիսային և ո՛չ Հարավային Կովկասն իրենց հետաքրքրությունների կենտրոնում չեն[6]: Սա Չինաստանին հարավկովկասյան երկրների հետ հարաբերություններում որոշակի առավելություն է տալիս: Մյուս գերտերությունների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ֆրանսիայի համեմատությամբ, Չինաստանը Կովկասում որոշակիորեն որևէ պետության հետ կապված չէ և, հետևապես՝ հակասությունների մեջ չէ մյուս երկրների հետ: Երբ այլ գերտերությունների գործողությունները, դրանց պատճառներն ու նպատակները ակտիվորեն քննարկվում են, Չինաստանը, փաստորեն, մնում է չեզոք:

Հարկ է նշել, Հայաստանի և Չինաստանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են 1992 թվականին: Վերջին տասնամյակում երկու երկրների հարաբերությունները բավական արդյունավետ են զարգանում և ընդգրկում են տնտեսական համագործակցության ամենատարբեր ոլորտներ՝ տնտեսություն, մշակույթ, կրթություն, սպորտ և այլն:

Չինաստանի հանդեպ Հայաստանի վարած քաղաքականության անգամ մակերեսային դիտարկումը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևանն ակտիվորեն փորձում է զարգացնել հարաբերությունները Պեկինի հետ՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով երկկողմ առևտրի վրա[7]:

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, Չինաստանի հետ արտաքին առևտրային հարաբերությունները, թեև տատանումներով, սակայն զարգանում են: Ընդ որում, եթե ներմուծման տեմպերի աճը վերջին տարիներին նվազել է, արտահանումը Չինաստան հետևողականորեն ավելանում է: Մասնավորապես՝ 2013 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, արտահանումը կրկնակի աճել է: Հետաքրքիր է, որ համանման միտում նկատվել է նաև 2012 թվականին: Այսպիսով՝ երրորդ տարին անընդմեջ արտահանման կրկնակի աճ է գրանցվում: 2013-ին Չինաստան է արտահանվել հիմնականում լեռնահանքային ընկերությունների արտադրանքը[8]:

---

[6] Տե՛ս **Goble P.,** China's Growing Political Role in the Caucasus, Eurasia Daily Monitor Volume: 10 Issue: 2013,
http://www.jamestown.org/programs/edm/single/?tx_ttnews%5Btt_news%5D=40355&cHash=70726fce872dfd2550942b05dbd2d75d#.UyKfQD-SxZg

[7] Տե՛ս **Ս. Սարաջյան,** Հայաստան և Չինաստան. փաստարկներ հատուկ համագործակցության օգտին, «21-րդ դար», 5 (45), 2012, էջ 6:

[8] Տե՛ս Տարեցտարի աճում է հայկական ապրանքների արտահանումը Չինաստան. **Հարություն-յան,** (19/05/2014),
http://arka.am/am/news/economy/tarectari_mecanum_e_artahanumy_chinastan_/

Աղյուսակ 1

Չինաստանի հետ առևտրային կապերի ցուցանիշները 2008–2013 թթ.[9]

	2008	2009	2010	2011	2012	2013
Արտահանում	1057161	710157,5	1019098	1337056	1361384	1478873
Արտահանում դեպի Չինաստան	1814,6	17880,2	30874	16262	31269,6	68837,8
Ներմուծում	4426129	3321134	3790527	4155856	4284925	4488753
Ներմուծում Չինաստանից	382155,9	284605,4	416881,7	409860	399785	386021
Համախառն արտաքին առևտուր	5483291	4031291	4809625	5492912	5646309	5967626
Համախառն առևտուր Չինաստանի հետ	383970,5	302485,6	447755,7	426122	431054	454859
Չինաստանի մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ	0,20%	2,50%	3,00%	1,20%	2,30%	4,70%
Չինաստանի մասնաբաժինը ՀՀ ներմուծման մեջ	8,60%	8,60%	11,00%	9,90%	9,30%	8,60%
Չինաստանի մասնաբաժինը ՀՀ համախառն առևտրում	7,00%	7,50%	9,30%	7,80%	7,60%	7,60%
Չինաստանից ներմուծման	-	-26%	46%	-2%	-2%	-3%
Չինաստան արտահանման շարժընթացը	-	885%	73%	-47%	92%	120%
Չինաստանի հետ համախառն առևտրի շարժընթացը	-	-21%	48%	-5%	1%	6%
ՀՀ համախառն առևտրում Չինաստանի մասնաբաժնի շարժընթացը	-	7,14%	24,00%	-16,13%	-2,56%	0,00%

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ Չինաստանը ՀՀ երկրորդ խոշոր առևտրային գործընկերն է, որի հետ 2013 թվականի դրությամբ Հայաստանի արտաքին առևտուրը կազմել է 454 մլն ԱՄՆ դոլար: Հարկ է նաև նշել, որ այս երկիրը 2010 թվականին եղել է Հայաստանի խոշորագույն առևտրային գործընկերը՝[10] համապատասխան ցուցանիշներով առաջ անցնելով Ռուսաստանից:

Հատկանշական է, որ հայ-չինական համագործակցության ամենախոշոր նախագծերից մեկը քլորոպրենային կաուչուկի արտադրության «Շանսի-Նաիրիտ» համատեղ ձեռնարկությունն է, որի բացման հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել 2010 թվականին: Երկու երկրները դիտարկում են

[9] ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգիրք - 2012: 2013 թվականի տվյալների աղբյուրը՝ www.customs.am/Մաքսային վիճակագրություն 2013/:

[10] Տե՛ս Տարեցտարի աճում է հայկական ապրանքների արտահանումը Չինաստան. **Ս. Սարաջյան,** (19/05/2014), http://arka.am/am/news/economy/tarectari_mecanum_e_artahanumy_chinastan_/

նաև բազալտի վերամշակման համատեղ ձեռնարկության ստեղծման հնարավորությունները:

Չինաստանը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում նաև աշխարհաքաղաքական առումով բավականին մեծ նշանակություն ունեցող տրանսպորտային նախագծի՝ Իրան-Հայաստան երկաթգծի շինարարության նկատմամբ, որը կապելու է Հայաստանը Պարսից ծոցի իրանական նավահանգիստների հետ: Չինական բանկերը պատրաստակամություն են հայտնել ֆինանսավորելու ծրագրի 60 տոկոսը[11]:

Հայաստան-Իրան երկաթգծի առկայության և Չինաստանի ու Իրանի երկաթգծային համակարգերի միացման դեպքում Չինաստանը Իրանի և Հայաստանի տարածքով ելք կունենա դեպի վրացական Փոթի և Բաթումի նավահանգիստներ, այնտեղից էլ՝ եվրոպական շուկաներ, ինչն էլ բնորոշ է Չինաստանի՝ իր տրանսպորտային ուղիները բազմազանեցնելու ռազմավարությանը:

Բացի այդ, Չինաստանի հետաքրքրությունը Հայաստան-Իրան երկաթգծի նկատմամբ պայմանավորված է չին-իրանական ռազմավարական հարաբերություններով և այդ երկրի նկատմամբ Պեկինի դիրքորոշմամբ[12]: Չինաստանը իրանական նավթի խոշորագույն ներմուծողն է. 2014 թ. առաջին կիսամյակում ներմուծումը կազմել է 630 հազար բարել/օր, ինչը 48 տոկոսով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ[13]:

Համաձայն Չինաստանի ղեկավար Հու Ջինտաոյի՝ Չինաստանն ու Հայաստանը «միմյանց վերաբերվել են որպես հավասարի» և միջազգային հարցերում աջակցել միմյանց[14]: Օրինակ՝ 2008 թվականին Չինաստանը կողմ չքվեարկեց Ադրբեջանի կողմից ներկայացված ՄԱԿ-ի բանաձևին, որը պահանջում էր ՀՀ ուժերի դուրսբերում Լեռնային Ղարաբաղի տարածքից: Սա բարդացնում է Պեկինի հարաբերությունները Բաքվի հետ, որ առանց այն էլ բարդացել էին, երբ 1999 թվականին Չինաստանը 8 «Թայֆուն» բազմակի հրթիռային համակարգ վաճառեց Հայաստանին:

Չինաստանը ո՛չ Ադրբեջանի, ո՛չ էլ Վրաստանի խոշորագույն առևտրային գործընկերներից է: Ադրբեջան-Չինաստան և Վրաստան-Չինաստան ապրանքաշրջանառությունը 2013 թ. կազմել է, համապատասխանաբար՝ 654[15] և 596[16] մլն ԱՄՆ դոլար: Փաստորեն, հարևան երկրների ապրանքաշրջանառությունը Չինաստանի հետ, բացարձակ արտահայտությամբ, գերազանցում է ՀՀ նույն ցուցանիշը, ինչը պայմանավորված է հարևան երկրների տնտեսությունների մեծությամբ:

Բաքուն փորձում է ամրապնդել Պեկինի հետ հարաբերությունները՝ օգտագործելով էներգետիկ և տրանսպորտային կապերը: «Բաքու-Թբիլիսի-

---

[11] Տե՛ս Ֆիննախ. Իրան-Հայաստան երկաթուղու բյուջեի 60%-ը կարելի է ստանալ Չինաստանից, (08/08/2014), http://news.am/arm/news/223030.html

[12] Տե՛ս **Ա. Բալասանով,** Պեկինը ամրապնդվում է նաև Հարավային Կովկասում, (19/02/2014թ.), http://www.panorama.am/am/politics/2014/02/19/pekin-china-analitics/

[13] Տե՛ս Китай почти в 2 раза нарастил импорт нефти из Ирана, 2014 http://neftegaz.ru/news/view/127391

[14] Տե՛ս **Muzalevsky R.,** China's engagement with the South Caucasus: Limitations and prospects, (06/09/2010), http://old.cacianalyst.org/?q=node/5342

[15] Տե՛ս The State Statistical Committee of the Republic of Azerbaijan, http://www.stat.gov.az/source/trade/indexen.php

[16] Տե՛ս National Statistics Office of Georgia, http://www.geostat.ge/index.php?action=page&p_id=137&lang=eng

Կարս» երկաթուղային նախագիծը, որը սկզբնապես նպատակ էր հետապնդում վերածնելու պատմական Մետաքսի ճանապարհը, ցամաքային միջանցքով Չինաստանը կապելու արևելաեվրոպական երկրների հետ, Պեկինի և Բաքվի հարաբերություններին լրացուցիչ խթան հաղորդեց:

Աղյուսակ 2

Հարավային Կովկասի երկրների արտաքին առևտուրը Չինաստանի հետ 2013 թ. (մլն ԱՄՆ դոլար)

Երկիր	Արտահանում	Ներմուծում	Առևտուր	Չինաստանի տեղը արտաքին առևտրային գործընկերների շարքում
Հայաստան	68	370	454	2
Վրաստան	33	563	596	5
Ադրբեջան	88	566	654	15

Վրաստանում Ադրբեջանի դեսպանի խոսքով՝ նշված երկաթուղին կգործարկվի 2015 թվականին, և չինական ապրանքները Եվրոպա տեղափոխելու համար անհրաժեշտ ժամանակը կկրճատվի 20–25 օրով[17]:

Ադրբեջանցի փորձագետներից մեկի կարծիքով՝ Հայաստանը ստիպված կլինի միջոցներ ձեռնարկել՝ Չինաստան-Ադրբեջան աճող համագործակցությունից հետ չմնալու համար: Հակառակ դեպքում, Չինաստանի չեզոք դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում նույնը չի մնա[18]:

Անհրաժեշտ է նշել, որ երկաթգծի գործարկումը իրական մարտահրավեր է Հայաստանին, մանավանդ որ դա քաղաքական՝ տարածաշրջանային տնտեսական նախագծերից Հայաստանին վերջնականապես մեկուսացնելու նպատակ ունի: Սակայն Եվրոպային կապող այլընտրանքային ուղու՝ Իրան-Հայաստան երկաթգծի նկատմամբ Չինաստանի հետաքրքրությունը վկայում է այն մասին, որ վերջինս տարածաշրջանին վերաբերող իր քաղաքականությունը չի պատրաստվում փոխել, առավել ևս Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հարցում:

Չինաստանի պաշտոնական դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հարցում հետևյալն է. «Չինաստանի Կառավարությունը հարգում է բոլոր երկրների ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը և հույս հայտնում, որ Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղ բանակցությունների միջոցով կգտնեն Լեռնային Ղարաբաղի արդար և ողջամիտ լուծում, որն ընդունելի կլինի երկու կողմի համար»[19]:

Չինաստանը խուսափում է Հարավային Կովկասի չճանաչված պետությունների հետ պետական մակարդակում կապեր հաստատելուց: Լեռնային Ղարաբաղի և Չինաստանի միջև քաղաքական կապեր գոյություն չունեն:

---

[17] Տե՛ս Новый великий шелковый путь – какую он пользу принесет Грузии?, (08/08/2014), http://commersant.ge/?menuid=91&id=14365&lang=3

[18] Տե՛ս **Ismailzade F.**, China's Relations with Azerbaijan. China and Eurasia Forum Quarterly, volume 5, no. 1 (2007), էջ 34, http://www.silkroadstudies.org/new/docs/CEF/Quarterly/February_2007/Ismailzade.pdf

[19] Տե՛ս Ministry of Foreign Afairs of the People's Republic of China, Nagorno-Karabakh Conflict 2013/12/24, http://www.fmprc.gov.cn/mfa_eng/gjhdq_665435/dqzzywt_665451/2633_665453/2639_665461/t15582.shtml

Սակայն տնտեսական հարաբերությունները բավականին ակտիվ են զարգանում: 2004 թվականին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի՝ Չինաստան այցով սկիզբ դրվեց Պեկինի և Ստեփանակերտի միջև ոչ պաշտոնական տնտեսական հարաբերություններին: Մինչև 2005 թվականը Լեռնային Ղարաբաղի և Չինաստանի միջև առևտրային հարաբերություններ ընդհանրապես չեն եղել: Դրան հաջորդող 5 տարիներին (2005–2010 թթ.) Չինաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև առևտուրն ավելացավ մոտ 16 անգամ[20]:

Վերջին տարիներին Իրան-Ռուսաստան-Չինաստան եռյակի հարաբերությունների զարգացումը լուրջ հեռանկարներ է բացում Հայաստանի համար: Ձուտ աշխարհաքաղաքական առումով, ստացվում է հաղորդակցության տնտեսական շղթա, որին մասնակցում են ասիական երկու հսկաները՝ Իրանն ու Չինաստանը, ինչպես և աշխարհաքաղաքական տեսանկյունից «երկակի» բնույթ ունեցող Ռուսաստանը՝ որպես ասիական և եվրոպական տերություն[21]:

Պեկինը Հարավային Կովկասում չի ցանկանում հրապարակավ հանդես գալ կողմերից որևէ մեկի օգտին, սակայն Հայաստանը կարող է դառնալ Չինաստան-Ռուսաստան-Իրան հզոր շղթայի մի օղակը, և չի կարելի բացառել, որ Պեկինի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում տեսականորեն, թեկուզև ոչ բացահայտ, կարող է փոխվել Ադրբեջանի համար ոչ այնքան ցանկալի ուղղությամբ:

Չինաստանն այսօր միջազգային հարաբերությունների առանցքային դերակատարներից է, գերտերություն, որն ի վիճակի է ձևավորել առանձին աշխարհաքաղաքական բևեռ: Համաշխարհային ուժային կենտրոնի գաղափարը լիովին իրականացնելու համար Չինաստանն ունի ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական և ռազմական բավարար ներուժ:

Վերոնշյալ հավակնությունները բավարարելու համար Չինաստանը իրականացնում է ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքակրթական ազդեցության ընդլայնման քաղաքականություն, որն արտահայտվում է «փափուկ ուժի» հայեցակարգի կիրառման միջոցով: Այս դեպքում բացառություն չի կազմում նաև Հարավային Կովկասը, այդ թվում՝ Հայաստանը:

Չինաստանը Հարավային Կովկասում իրականացնում է հավասարակշռված քաղաքականություն և չեզոք դիրք է գրավում տարածաշրջանում առկա (Աբխազիա, Հարավային Օսիա, Լեռնային Ղարաբաղ) հակամարտությունների առումով:

Ադրբեջանը, օգտագործելով Չինաստանի հետ էներգետիկ և տրանսպորտային կապերը, փորձում է վերջինիս դիրքորոշման վրա ազդել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հարցում:

Իր հերթին, Եվրոպային կապող այլընտրանքային ուղու՝ Իրան-Հայաստան երկաթգծի նկատմամբ Չինաստանի հետաքրքրությունը վկայում է այն մասին, որ վերջինս տարածաշրջանին առնչվող իր քաղաքականությունը չի պատրաստվում փոխել՝ առավել ևս Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հարցում:

---

[20] Տե՛ս **Агаджанян М.,** Китайский интерес к Южному Кавказу, №18 (201), октябрь (1–15), 2012, http://noev-kovcheg.ru/mag/2012-18/3479.html

[21] Տե՛ս **Ս. Շաքարյանց,** Ինչո՞ւ բարձրանալ խորտակվող նավի վրա, 2014, http://www.armworld.am/detail.php?paperid=4769&pageid=146753&lang=

Հայ-չինական հարաբերություններում կենսական նշանակություն ունի Ռուսաստան-Իրան-Չինաստան եռակողմ համագործակցությունը: Վերջին տարիներին եռյակի հարաբերությունները արդյունավետ զարգանում են: Դրանց խորացումը զարգացման լուրջ հեռանկարներ կարող է ստեղծել նաև Հայաստանի համար: Իրան-Հայաստան երկաթուղային նախագծի նկատմամբ հետաքրքրություն են ցուցաբերում թե՛ Իրանը, թե՛ Ռուսաստանը, թե՛ Չինաստանը: Երեք տերությունների տնտեսական շղթայում Հայաստանի ներգրավումը կարող է վերջինիս դուրս բերել պարտադրված շրջափակումից, որի հետևանքով Ադրբեջանը կզրկվի այն լծակից, որով փորձում է ճնշում գործադրել Հայաստանի վրա Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման հարցում միակողմանի զիջումներ պարտադրելու իմաստով:

ВАРДАН АТОЯН
Директор программы «Исследования национальной безопасности» исследовательского центра «Амберд» АГЭУ, кандидат экономических наук

ШУШАН МОВСИСЯН
Младший эксперт программы «Исследования национальной безопасности» исследовательского центра «Амберд» АГЭУ

Южный Кавказ и Армения во внешней политике Китая: пробуждение спящего гиганта.- В 21-м веке Китайская Народная Республика стала одним из ключевых геополитических игроков в мире, чье влияние давно уже вышло далеко за пределы своих национальных границ. Оценивая быстро меняющиеся геополитические реалии, страны Южного Кавказа также пытаются активизировать восточный вектор своей внешней политики.

В статье выявлены контуры внешней политики Китая по отношению к Южному Кавказу, в том числе и к Армении. Обсуждаются способы расширения экономического, политического и цивилизационного влияния Китая, как нового глобального центра силы.

Одновременно рассматриваются интересы Китая на Южном Кавказе, а также перспективы и возможности развития армяно-китайских экономических, политических отношений в контексте текущих геополитических процессов в регионе.

VARDAN ATOYAN
Director of "National Security Research" program at "Amberd" Research Center, ASUE

SHUSHAN MOVSISYAN
Junior expert of "National Security Research" program at "Amberd" Research Center, ASUE

The South Caucasus and Armenia in China's Foreign Policy: Awakening of the Sleeping Giant.- The Republic of China has become one of the key geopolitical players of 21st century whose influence has passed beyond its national borders. Considering the rapidly changing geopolitical situation the countries of the South Caucasus also try to enhance eastern vector of their foreign policy.

The article presents outlines of China's policy towards the South Caucasus, particularly towards the Republic of Armenia. The means of China's political, economic, civilization influence of China, as a new global force center, are discussed. At the same time China's interests in the South Caucasus are considered. In the geopolitical context, the perspectives and opportunities of Armenian Chinese economic and political relations are discussed in the given paper.